Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիա, Հայաստանի Կենսաբանական Հանդես
Национальная Академия Наук Армении, Биологический Журнал Армении
National Academy of Sciences of Armenia, Biological Journal of Armenia

Биолог. журн. Армении, 3 (55), 2003

ԼԵՎՈՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ՄԱՏԻՆՅԱՆ
(ծննդյան 80-ամյակի առթիվ)

Հայաստանի գիտական հասարակայնությունն այսօր նշում է կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի վաստակավոր գործիչ, Բնապահպանության և կենսագործունեության անվտանգության միջազգային ակադեմիայի, Հայաստանի Վիրաբուժական գիտությունների իսկական անդամ, Ուղեղի հետազոտության միջազգային կազմակերպության անդամ, Անգլիայի պարապլեգային կազմակերպության պատվավոր անդամ, ՀՀ ԳԱԱ Լ.Ա. Օրբելու անվան Ֆիզիոլոգիայի ինստիտուտի նյարդա-ներզատչական փոխհարաբերությունների լաբորատորիայի վարիչ, ֆիզիոլոգ Լևոն Արշալույսի Մատինյանի ծննդյան 80 և գիտա-մանկավարժական գործունեության 55-ամյակը:

Լ.Ա. Մատինյանը ծնվել է 1923 թվականի սեպտեմբերի 11-ին Թբիլիսիում: Նրա գիտական հետազոտությունները հիմնարար-կիրառական են, բազմաբնույթ, նվիրված են երիկամների գործունեության վրա Հայաստանի հանքային ջրերի ազդեցության ֆիզիոլոգիական մեխանիզմների ուսումնասիրությանը, արյունաստեղծման համակարգի համեմատաֆիզիոլոգիական մեխանիզմների, մարդու և կենդանիների օրգանիզմների կենսառիթմերի մեխանիզմների պայմանական ռեֆլեքսների դրսևորման անհատական և պատմական օրինաչափություններին, օրգանիզմի փոխհատուցող-հարմարողական գործունեության էվոլյուցիոն առանձնահատկություններին, վնասված կենտրոնական նյարդային համակարգի առանձնահատկությունների և դրանց հիմքում ընկած ֆիզիոլոգիական մեխանիզմների բացահայտման օրինաչափությունների ուսումնասիրությանը: Այդ հետազոտությունների հիման վրա մշակվել են ողնուղեղի վնասումների բուժման նոր եղանակներ: Հատկապես կարևոր տեղ է գրավում վնասված նյարդերի ախտահարումների, ստոմատոլոգիական հիվանդությունները կենդանական և բուսական ծագման տարբեր ֆերմենտներով և դրանց ու ֆիզիկական գործոնների զուգակցումով բուժման համար մշակված Լ. Մատինյանի և նրա աշակերտների մեթոդները, որոնք այսօր հաջողությամբ կիրառվում են նյարդավիրաբուժության, վիրաբուժության, ատամնաբուժական կլինիկաներում:

Հայրենական Մեծ Պատերազմի տարիներին պրոֆեսոր Լ. Մատինյանը մշակել է էվկալիպտոթերապիայի մեթոդը, որը հաջողությամբ ներդրվել է կլինիկաներում և բուժել բազմաթիվ զինվորների վերքեր:

Մեր հոբելյարը հեղինակ է 250 գիտական աշխատանքների, ներառյալ 5 մենագրության, որոնցից մեկը թարգմանվել է անգլերեն և տպագրվել ԱՄՆ-ում, հեղինակ է 2 գյուտարարական աշխատանքի գրանցված ՀՀ Պետական գրանցամատյանում և 5 մեթոդական հանձնարարականների ու 3 նորարարական առաջարկության: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են 2 դոկտորական և 11 թեկնածուական թեզեր:

Թբիլիսիի Բժշկական ինստիտուտը գերազանցությամբ ավարտելուց հետո Լ.Ա. Մատինյանը անցել է Երևանի Բժշկական ինստիտուտին կից թերապիայի գծով օրդինատուրան, միաժամանակ (1946թ.) աշխատելով Հայաստանի ԳԱ Ֆիզիոլոգիայի ինստիտուտում, սկզբում

որպես ավագ լաբորանտ, ապա կրտսեր, հետագայում ավագ գիտական աշխատող: Եղել է ինստիտուտի գիտական գծով քարտուղարը, իսկ 1983-1993թթ. նույն ինստիտուտի գիտական գծով փոխտնօրենը միաժամանակ ղեկավարել է նյարդա-ներզատչական փոխհարաբերությունների լաբորատորիան:

Ներկայումս հանդիսանում է Լ. Օրբելու անվան Ֆիզիոլոգիայի ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող խորհրդի նախագահը և ղեկավարում է Հայկական Ֆիզիոլոգիական Ընկերությունը:

Պրոֆեսոր Լ.Ա. Մատինյանը իր գիտական անբասիր գործունեության համար պարգևատրվել է «Հայրենական Մեծ Պատերազմի», «Աշխատանքի Վետերան», «Հաղթանակի 50-ամյա տարելիցը Հայրենական պատերազմում» և այլ մեդալներով: 20-րդ հարյուրամյակում գիտության մեջ ունեցած նվաճումների համար Լ.Մատինյանը 1997թ. արժանացել է «Տարվա Մարդ» կոչմանը և պարգևատրվել է 2000-ամյա փառքի ոսկյա ու միջազգային արծաթյա մեդալներով: Հոբելյանի առթիվ Բնապահպանության և կենսագործունեության միջազգային ակադեմիան նրան պարգևատրել է Մ.Վ. Լոմոնոսովի անվան ոսկե մեդալով:

Այսօր էլ պրոֆեսոր Լ. Մատինյանը լի է գիտական-ստեղծագործական եռանդով, շարունակում է կատարել մեծածավալ ու բազմաբնույթ ֆիզիոլոգիական հետազոտություններ: Նա աչքի է ընկնում իր համեստությամբ, աշխատասիրությամբ: Ցանկանում ենք մեր հոբելյարին քաջառողջություն և երկարակեցություն:

ՀՀ ԳԱԱ Լ.Ա. Օրբելու անվան Ֆիզիոլոգիայի ինստիտուտի գիտության գծով փոխտնօրեն, կգդ **Խ.Հ. Նահապետյան**

Լաբորատորիայի վարիչ, կգդ **Ռ.Ա. Հարությունյան**